

ԳԵՆԵԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԵԼԵՆՈՂՐԱԾԻՍ

«ՍԱՍՆԱ ԺՈՒՐ» ԷՊՈՍԻ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

Հայպետհրատի հրատարակությամբ լույս է տեսել հայ ժողովրդական հերոսական էպոսի՝ «Սասնա ծռերի» պատումների (վարիանտների) երկրորդ հատորի երկրորդ մասը՝ Առաջին հատորը և երկրորդ հատորի առաջին մասը լույս են տեսել 1936, 1944 թվականներին։ Երկրորդ հատորի երկրորդ գրքի լույս ընծայումով լրացվում և ամրոգացվում է մեր հերոսական էպոսի պատումների լիակատար հրատարակությունը։ Այժմ մենք ունենք երեք գրքով հրատարակված շուրջ 50 պատում՝ անհրաժեշտ ծանոթագրություններով, օտար և բարբառային դժվար հասկանալի բառերի, դարձվածքների ու քերականական ձևերի բառարանով, էպոսի հերոսների ճյուղագրությամբ, հատուկ անունների և առարկայական օանկերով։

Մեծ է հրատարակված հատորների կուլտուրական և դիտական նշանակությունը։ Դրանք իբրև հայ ժողովրդի անցյալ կյանքի ու պայքարի հանրագիտարան հարուստ նյութ են մատակարարում, ինչպես գիտության մի շարք ճյուղերի մասնագետներին՝ պատմաբաններին, գրականագետներին, լեզվաբաններին և աղյուցագետներին, այնպես էլ զրոգներին, նկարիչներին, երաժիշտներին և այլն։ Այսպիսով, անցյալի մեր առաջավոր ինտելիգենցիայի երազանքը՝ գիտական լիակատար հրատարակությամբ տեսնել «Սասնա ծռերը», կատարվեց միայն մեր պայմաններում՝ Սովետական իշխանության պայմաններում։ Սովետական կառավարության և կոմունիստական պարտիայի հոգատարության շնորհիվ կազմակերպվեց նաև «Սասունցի Դավիթ» հերոսական էպոսի 1000-ամյա հոբելյանը։

Էպոսի 1000-ամյակի տոնակատարությունը լայն ու խոր արձագանք գտավ մեր մեծ Հայրենիքի բոլոր անկյուններում և դարձավ սովետական ողջ ժողովրդի կուլտուրայի տոնը։ «Այդ տոնակատարությանը, — գրում է «Պրավդան» 1939 թ. սեպտեմբերի 15-ի առաջնորդողում, — մասնակցում է սովետական ողջ ժողովուրդը։ Պեմի հերոսական կերպարները մտել են սովետական գրականության ու կուլտուրայի ընդհանուր գանձարանը։ Դրանք հարստացնում են գրողների, պոետների, նկարիչների ստեղծագործությունները մեր Միության բոլոր ռեսպուբլիկաներում։ Սովետական կուլտուրայի միջոցով «Սասունցի Դավիթը» մտնում է համաշխարհային կուլտուրայի օրբիտի մեջ և դառնում է մարդկության հերոսական մեծ էպոսի մի մասը — «Իլիականի» և «Ոդիսականի», ռուս ժողովրդի դյուցազնական բիլինային էպոսի, «Կալևալայի» և հյուսիսի սագաների, «Նիբելունգների երգի» և ժողովրդական ստեղծագործության բազմաթիվ այլ գանձերի կողքին»։

Ինչով է բացատրվում մեր հերոսական էպոսի տոնակատարության համաժողովրդագական, համամիութենական բնույթը և նրան տված նմանօրինակ բարձր գնահատականը։ Այդ բացատրվում է «Սասունցի Դավիթ» («Սասնա ծռերի») իդեական առաջավոր բովանդակությամբ և գեղարվեստական բարձր արժանիքներով, նրա խորապես ժողովրդական ստեղծագործություն լինելու ծանրակշիռ փաստով։

Իբրև խորապես ժողովրդական ստեղծագործություն «Սասնա ծռեր» էպոսը գեղարվեստական լայն ու խոր ընդհանրացումներով արտացոլում է ժողովրդի կյանքը, ազգային ու սոցիալական ճնշման դեմ նրա մղած դարավոր հերոսական կռիվները, նրա իդեալներն ու երազանքը լավագույն ապագայի մասին։ Այն հայ ժողովրդի ազատատենչ ոգու մարմնացումն է, նրա ստեղծագործական անսպառ կարողության փայլուն վկայագիրը։

Հսկայական է էպոսի ճանաչողական նշանակությունը։ Զեկավորվելով 9—10-րդ դարերում, այն ճշմարտացի կերպով արտացոլում է այդ դարերի պատմական իրադարձու-

1 Սասնա ծռեր, հատ. Բ, մաս Բ, խմբագրեց ակադեմիկոս Մանուկ Արեգյան, աշխատակցությամբ պրոֆեսոր Կարապետ Մ. Օհանջանյանի։

թյունները՝ արարական տիրապետութեան դեմ ժողովրդի մղած ազատագրական կռիւները։ Սակայն այդ դարերով չի սահմանափակվում նրա հարուստ բովանդակութիւնը։ Նա իր ժանրային առանձնահատկութեան շնորհիվ չի դարձել մի պատմաշրջանի հուշարձան։ Ուստի և անխուսափելիորեն չի քարացել։ այլ սերնդից-սերունդ անցնելով մշտապես նորոգվել է։ Այս հանդամանքը նրան դարձրել է հազարավոր տարիների անմիջականութեամբ տողորված մի ստեղծագործութիւն։ որն իր մեջ է առել ոչ միայն արարների, այլև նախորդ ու հաջորդ դարերի ներքին և արտաքին հարստահարիչների դեմ հայ ժողովրդի մղած հերոսական կռիւները, նրա ազատ ու խաղաղ ապրելու զարավոր ձգտումը։

էպոսի անմահ հերոսները կովելով արտաքին թշնամու դեմ, չեն մոռանում ներքին թշնամուն, հայրենի հարստահարիչներին։ Նրանք դաժանորեն պատժում են բոլոր նրանց, ովքեր ճնշում են աշխատավորին, խլում նրա արդար վաստակը։ Հայրենի տերերի դեմ մղած կռիվը, եթե էպոսի առաջին երկու ճյուղում արտահայտվում է առասպելական երանգով՝ բազմաթիվ հրեշների, ջրարդել վիշապների և ամենի առյուծի դեմ Սանասարի, Բաղասարի և Մեծ Մհերի մղած կռիվ ձևով, ապա Դավթի և հատկապես փոքր Մհերի ճյուղում՝ միանգամայն ռեալ ու կոնկրետ դրսևորում է ստանում։ Ձևավորվելով միջնադարում, էպոսը չար աշխարհի դեմ Մհերի մղած կռիվ միջոցով արտացոլել է ֆեոդալական հասարակութեան առանձնահատկութիւններից մեկը՝ ֆեոդալների և աշխատավոր դուռնապետութեան միջև մղված դասակարգային պայքարը։ Չար աշխարհի դեմ փոքր Մհերի մղած կռիվը, միջնադարյան Հայաստանում իշխողների դեմ՝ բռնկված դուռնապետական ապստամբութիւնների զեղարկեցողական արտացոլումն է, շահագործողների դեմ շահագործվողների մղած տևական կռիվի արտահայտութիւնը։

էպոսի հերոսները ազգային ու սոցիալական ճնշումից ազատագրելով հայ ժողովրդին, չեն մոռանում նաև մյուս ժողովուրդներին։ Նրանք խորապես հարգում են մյուս ժողովուրդների ինքնութեան իրավունքը, ազգային և սոցիալական ճնշումից ազատ ապրելու նրանց ձգտումը։ Դավթը Մարամելիքին սպանելուց հետո, հակառակ նրա մոր ցանկութեան, հրաժարվում է իշխել Մարա ժողովրդին, ավելին, վերջիններիս սեփական իշխաններին ոչնչացնելու կոչ է անում։ Նույն կերպ է վարվում նաև Բարը Ֆրենկին և նրա «ճոշ մարդեր» սպանելուց հետո։ Ոչնչացնելով բռնակալներին, նա իշխանութիւնը տալիս է ժողովրդին և պատվիրում է խաղաղ ապրել, իսկ հարկ եղած դեպքում բնաջնջել պատերազմի հրձիգներին։ Իրրև ժողովրդի խիզախ պաշտպան, նա իր պատրաստակամութեանն է հայտնում հետադայում էլ օգնել նրանց թալանչիների դեմ մղված կռիվում։

Կերթա Բարը Ֆրենկի քաղաք,

Խաղաղոր կը բռնի, կզարկի, կը սպանի,

Ջաթի ճոշ մարդեր կը սպանի

Պստիկներ զեղ կը դնի կրսի,

—Քանի դուր ժիր եք, կռիվ միք երթա,

Ետնե կթարխի—որ դու նեղ կընդնեք,

Ինձ թուղթ դրեք, ճամրխեք, իս կը դամ։

Այսպիսով, էպոսի հերոսները պաշտպանում էն աշխատավոր ժողովուրդների շահը, որտեղ էլ որ նրանք գտնվելիս լինեն, ինչ ազգի ու կրոնի էլ պատկանելիս լինեն։ Դրա վրա է հիմնված ժողովուրդների անխախտ բարեկամութիւնը էպոսում։ Ժխտելով հայրենի և օտար հարստահարիչներին, պաշտպանելով հայրենի և օտար ժողովուրդների կենսական շահերը, էպոսը իդեալապես հաստատել ու գովերգել է ժողովուրդների բարեկամութեան վեհ դադափարը։ Այն ժողովուրդների բարեկամութեան մի խանդավառ ստեղծագործութիւն է։

Օտար զավթիչների և հայրենի ճնշողների դեմ ազատ կյանքի ու լավագույն ապագայի համար մղված տևական կռիւներում պայծառ կերպով հանդես է եկել էպոսի հերոսների օպտիմիզմը՝ խոր հավատը իր ուժի անպարտելիութեան ու հաղթանակի նկատմամբ և ջերմ, անձնուրաց հայրենասիրութիւնը։ Հայրենասիրութիւնը կազմում է էպոսի հերոսների գոյութեան իմաստը, նրանց բոլոր գործողութիւնների հիմքն ու նպատակը։ Ծովինարը համաձայնվում է դառնալ կռապաշտ թաղավորի կինը հանուն հայրենիքի։ Հանուն հայրենիքի բնութեան ու հասարակութեան շար ուժերի դեմ կռվում են Սանասարն ու Բաղասարը։ Այդ նույն հայրենիքի համար ազգային ու սոցիալական թշնամու դեմ հերոսաբար կռիվ են մղում Դավթն ու Մհերը։

էպոսը իր հայրենասիրական անմահ կերպարներով ու վեհ դադափարներով միշտ իր ստեղծող ժողովրդի հետ է և յուրովի մասնակցում է նրա թե՛ ստեղծագործական մաքառումներին և թե՛ ազատության ու խաղաղության համար մղած հերոսական պայքարին։ Այն ըստ էության ստեղծագործ աշխատանքի, անձնուրաց հայրենասիրության և խաղաղության մի անմահ ստեղծագործություն է, ժողովուրդներին ոչնչացնելու կամ ստրկացնելու նպատակով պատերազմ սանձադեբող բոլոր ժամանակների Մսրամելիքների ու Բարր Ֆրենկների դեմ ուղղված պայքարի մարմնացում։

Կռիվ հայ և օտար ժողովուրդների ազգային ու սոցիալական թշնամիների դեմ, թալանչիական պատերազմների ժխտում և ժողովուրդների ինքնության պաշտպանություն, ստեղծագործ աշխատանքի և խաղաղության գովերգ, ջերմ, անձնուրաց հայրենասիրություն և ժողովուրդների անխախտ բարեկամություն—սրանք են ընդհանուր գծերով այն գաղափարները, որ դրսևորված են «Սասնա ծռեր»-ում։ Էպոսի այս գաղափարներն են ահա, որ նրա տոնակատարությանը տվեցին համամիութենական, համաժողովրդական բնույթ։ Դրանք էին, որ սովետական կուլտուրայի միջոցով «Սասունցի Դավիթը» մտցրին համաշխարհային կուլտուրայի օրբիտի մեջ և դարձրին մարդկության հերոսական մեծ էպոսի մի մասը։

Մեր մեծ Միության ժողովուրդները հայ ժողովրդի հերոսական անցյալն արտացոլող «Սասունցի Դավիթը» համարեցին իրենց հարազատ ստեղծագործությունը, իսկ նրա հազարամյակը՝ իրենց կուլտուրայի տոնը, որովհետև «...հերոսական անցյալն ի սպաս են դնում հիանալի, հերոսական ներկային, ի սպաս են դնում 'Է, ավելի հիանալի, հերոսական ապագայի համար մղվող պայքարին» (Պրավդա, 1939, սեպտեմբերի 15)։

«Սասնա ծռերի» պատումների առաջին և երկրորդ հատորի խմբագիրներն առաջին հատորում գետեղված ներածության մեջ մեթոդոլոգիական ճիշտ դիրքերից չեն բացահայտել էպոսի իդեալական առաջավոր բովանդակությունը և հետևապես չեն հերքել, զրա հետ կապված մի շարք հարցերի վերաբերյալ նախասովետական ֆոլկլորագիտության հայտնած հակադիտական դրույթները։ Ընդհակառակը, էպոսի մասին նախասովետական շրջանում մի քանի ֆոլկլորագետների և իրեն իսկ Արեղյանի հայտնած անընդունելի դրույթները որոշակիորեն պաշտպանվեցին ոչ միայն «Սասնա ծռերի» առաջին հատորի ներածության մեջ (1936), այլև 1939 թ. էպոսի տոնակատարության օրերին Մ. Արեղյանի գրած «Մատենագրություն «Սասունցի Դավիթ» հայ ժողովրդական վեպի մասին» աշխատությունում։

Առաջ քաշելով «Սասնա ծռերի» ճյուղերի ծագման հարցը ներածության հեղինակները շտապում են կրկնել Գ. Սրվանձտյանցի դեռևս 1874 թ. հայտնած այն կարծիքը, թե էպոսի առաջին ճյուղը ծագել է Աստվածաշնչից։ Էպոսի առաջին ճյուղի ծագման այդ ըստ էության կղերափեռալական վերսիան ներածության հեղինակները ջանում են հաստատել ու հիմնավորել էպոսի Սանասարի և Աստվածաշնչի Սանասարի անվան նմանությունը, Աստվածաշնչի Սենեքերիմ թագավորի և էպոսի առաջին ճյուղի կռապաշտ թագավորի արարքների նմանությունը, Սանասարի, Բաղդասարի մի քանի գործողություններով և այլն։ Աստվածաշնչի գրույթների ազդեցությամբ հորինված են համարում նաև թագավորից Սանասարի ու Բաղդասարի թույլտվություն ստանալու և իրենց բերդը կառուցելու պատմությունը։ 1939 թ. հայտնած այս կարծիքը ներածության հեղինակները կրկնում են նաև «Սասնա ծռերի» վերջերս հրատարակված երկրորդ հատորի ծանոթագրությունների մեջ։ Այդտեղ «Սանասարի ճյուղի» մասին կարդում ենք հետևյալը. «Սանասար անունը և նրա գրույթը վեպի մեջ առնված է Աստվածաշնչից» («Ս. ծ., հ. Բ, մաս Բ, էջ 869)։ Ներածության հեղինակներն, այսպիսով, «դիցարանական» և «համեմատական» դպրոցների հետևորդների նման մի քանի կրոնական գրույթներից և մեր վեպի դիցարանական դեպքերի մի քանի նմանությունից Աստվածաշնչի հետ—ստեղծում են աստվածաբանական մի ամբողջ տեսություն։

Ներածության հեղինակները էպոսի առաջին ճյուղի ծագման աստվածաբանական վերսիայի վրա են կառուցել նաև նրա ֆեոդալական ազնվականական ծագման բուրժուական տեսությունը։ Նշելով Սանասարի հետ կապված աստվածաշնչյան գրույթները, նրանք գրում են՝ «Այս բոլոր գրույթների մեջ առանձնապես աչքի է ընկնում այն, որ երկրի իշխողները, ֆեոդալները իրենց հավատարիմ ծառաներին վարձատրում են՝ կալվածներ և ճորտեր տալով նրանց, որով և ծագում է մի նոր ազնվականական տոհմ՝ իր ժառանգական Սասուն Բերդով» («Ս. ծ., հ. Ա, էջ Ժ—10)։ Սանասարն ու Բաղդասարը հիմնա-

դրելով իրենց բերդը, ըստ ներածության հեղինակների, ստեղծում են մի նոր ազնվական տոհմ։ Այսպիսով, ըստ նրանց, էպոսի առաջին ճյուղի պատմությունն ամբողջությամբ նոր կազմված ազնվական տոհմի պատմությունն է։

Սակայն ներածության հեղինակները չեն բավարարվում միայն դրանով։ Նրանք ավելի առաջ են դնում տասնյակ տարիներ առաջ հորինած իրենց սխալ, անընդունելի տեսություն մեջ և գտնում են, որ ազնվականական է ոչ միայն վեպի առաջին ճյուղը, այլև վեպը ամբողջությամբ վերցրած։ Վեպի առաջին հատորի ներածության մեջ, նրանք գրում են՝ «Սասնա ծռեր» ժողովրդական վեպը Սասունի և շրջակա գավառների վրա իշխողների ավանդական հիշատակարանն է, հիմնված և իրական և կեղծ պատմության վրա» (Ս. ծ., հ. Ա, էջ ԻԷ—26)։ Ամբողջ ներածության մեջ ուղղակի կամ անուղղակի ձևով նրանք անցկացնում են այս տեսությունը։ Միակ «Գաղափարական գիծում», որ անում են, այդ այն է, որ ներածության մեջ նշում են, թե վեպը հետազայում ազնվականությունից անցել է ժողովրդին և հարստացել նրա կյանքի ու կենցաղի մի շարք գծերով։ Պետք է նշել, որ այս «գաղափարական գիծման» մեջ նրանք ուղղակի և բացահայտ ձևով կրկնում և «հիմնավորում» են սխալ, հակագիտական այն տեսությունը, թե ժողովրդական բանավոր ստեղծագործության արժեքները ազնվականության քայքայման հետևանքով ժողովրդին անցած ազնվական կուլտուրայի փշրանքներն են։ Ներածության հեղինակները ազնվականությունից ժողովրդին անցած են համարում ժողովրդական ողջ բանահյուսությունը, այդ թվում նաև մեր հին վեպերը, որոնք ֆեոդալական պատմագիրները վերցնելով ժողովրդից, փոխել են, դարձնելով տիրասիրական վեպեր։ Ամբողջությամբ շուրջ տալով պատմական իրական փաստերը, ներածության հեղինակները գրում են՝ «Երոդ դասակարգերի հոգևոր արտադրության նման անցումը շահագործվող աշխատավորական զանգվածներին՝ հատուկ է ոչ միայն մեր հին վեպին, այլ բնականորեն նաև մեր նոր վեպին՝ «Սասնա ծռերին»։ Վերջինս ստեղծվելով նույնպես իշխող դասակարգի, Սասունի ազնվականության միջավայրում և արտահայտելով նրա կեցությունն ու գաղափարները, ամենավաղ ժամանակաշրջանում անցել է շինականությունը» (Ս. ծ., հ. Ա, էջ ԻԷ—27)։ Մի փոքր հետո այսուհետ միտքը ձևակերպում են այսպես. «Գասային քայքայման ... պրոցեսում «Սասնա ծռեր» ֆեոդալական վեպը իջնում, հասնում է տնտեսապես և սոցիալապես ֆեոդալների ներհակ դասին, այն է՝ շինականությանը» (Ս. ծ., հ. Ա, էջ ԵԲ—29)։ Նրանք, այսպիսով, ֆեոդալական հասարակության մեջ տեսնում են միայն մեկ կուլտուրա՝ իշխողների կուլտուրա։ Ժողովրդին զրկելով հոգևոր արժեքներ ստեղծելու կարողությունից նրան վերագրում են այն տիրող դասակարգից մուրալու դեր։

«Սասնա ծռեր» էպոսը իր առաջավոր գաղափարներով ժխտում է ներածության հեղինակների հիշյալ հակագիտական դրույթները։ Էպոսի գլխավոր հերոսները և դրական մյուս կերպարներն իրենց կենցաղով, կեցությամբ ու գիտակցությամբ, գործողություններով, հետապնդած նպատակներով ու գործելակերպով, ամբողջությամբ ժողովրդական են, հանդիսանում են ժողովրդի մարմնացումը և իբրև այդպիսին հակադրվում են ազնվականությանը և ֆեոդալական դասակարգի բոլոր ներկայացուցիչներին։ «Սասնա ծռերը» աշխատավոր ժողովրդի ստեղծագործությունն է և պատկանում է միայն նրան։ Ոչ թե ժողովուրդն է վերցրել իշխող դասակարգից, այլ, ընդհակառակը, իշխող դասակարգերն են կորցել նրա ստեղծած, ինչպես նյութական, այնպես էլ հոգևոր արժեքները։ Այդ են ապացուցում ժողովրդական բանահյուսության օգտագործումը «Պարսից պատերազմ» և «Տարոնի պատերազմ» ըստ էության տիրասիրական վեպերում։ «Սասնա ծռեր» վեպը իր բոլոր մանրամասների մեջ խորապես հակաֆեոդալական վեպ է, որը զեղարկատական բացառիկ ընդհանրացումներով ժխտում է, ինչպես թալանչիական պատերազմները, որոնք հատուկ են իշխողներին, այնպես էլ բոլոր տիպի կեղեքիչներին՝ պաշտպանելով ժողովրդի ինքնությունը, արտաքին ու ներքին հարստահարիչներից ազատ նրա խաղաղ, ստեղծագործ աշխատանքը։ Այն փաստը, որ «Սասնա ծռերը» չի հիշատակվում միջնադարյան պատմիչների աշխատություններում ու հիշատակարաններում, այլ կենդանի ապրել է միայն ժողովրդի մեջ և նրա միջոցով հասել մեր օրերը, նրա ժողովրդական ծագման ու բովանդակության փայլուն ապացույցներից մեկն է։

Նշելով արտաքին փաստերը, ներածության հեղինակները բացարձակապես լուրջ են մատնում էպոսում դրսևորված դարաշրջանի բնորոշ գծերը։ Նրանք շեշտը դնելով արտաքին փաստերի և օտար թշնամու գեմ էպոսում մղված կռվի վրա և աշխատելով դրանի վրա ժամանակի ու տեղի հետ կապված մանրամասները, որոշակի անտեսում

են այն պայքարը, որ ժողովուրդը մղել է իշխող դասակարգերի դեմ: Այդ պատճառով ներածութան մեջ ուղղակի գրում են՝ «Սասնա ծռեր» վեպը չի տալիս ... իշխողների և հպատակ ոամիկ ժողովրդի փոխհարաբերությունների իրական նկարագիրը» (Ա. ծ. 3, հ. Ա, էջ 2Ա—31):

Այսպիսով, նրանք, ըստ էության ժխտում են շահագործողների նկատմամբ՝ Դավթի ցուցարարած ժխտական վերաբերմունքի բազմաթիվ փաստերը և հատկապես Փ. Մհերի ըմբոստ կերպարը, որը չար աշխարհի դեմ մղած իր հերոսական կռիվ արտահայտում է ֆեոդալների դեմ բռնկված գյուղացիական ապստամբությունների համառ բնույթը և շահագործողների լուծը թռթափել ցանկացող ժողովրդի տեական դարավոր պայքարը:

Սրանք են մեր հերոսական էպոսի գնահատման գործում պրոֆեսոր Մ. Արեգյանի, Կ. Մ. Օհանջանյանի թույլ տված սխալները, որոնք արտահայտել են նրանք «Սասնա ծռերի» առաջին հատորի ներածության մեջ: Այդ ներածության մասին խոսք չէր լինի, եթե որոշակի կապ չլիներ նրանց սխալ գրույթների և էպոսի վերջերս հրատարակված հատորի մի քանի կեղծ «պատումների» միջև, «պատումներ», որոնք իրենց հիմնական բովանդակությամբ ձայնակցում են, ինչպես արդեն նկատել ենք, ներածության հեղինակների վերոհիշյալ սխալ գրույթներին: Այդ բանում կհամոզվենք պատումներից մի երկուսի համառոտ վերլուծությամբ:

«Սասնա ծռերի» վերջերս հրատարակված երկրորդ հատորի երկրորդ մասի հենց սկզբում տեղավորված ասացող չակոր Նրգեյանի պատումը էպոսի իդեական առաջավոր բովանդակությունն աղավաղող մի քանի կեղծ պատումների մեջ ամենացայտունն է:

Պատումը չակոր Նրգեյանից գրի է առնված 1926 թ., Երանոս գյուղում, նրա կյանքի վերջին շրջանում, երբ պատումը գրառողի վկայությամբ «նա պատում էր յուրովի խմբագրած երգախառն ազգայնական վեպեր»:

Ըստ պատումը գրառողի տված տեղեկությունների, ասացող Նրգեյանը ներկայանում է մեզ իբրև կիսաինտելիգենտ, կրոնա-եկեղեցական աշխարհայացքի տեր մարդ, իբրև տիրացու և նացիոնալիստ: Հենց այս գծերով էլ նա տարբերվում է էպոսի գրեթե մյուս բոլոր ասացողներից: Մինչդեռ էպոսի մյուս ասացողներն իրենց պատումների մեջ որոշակիորեն դրսևորում են ժողովրդի կյանքը, նրա մտածողությունը, ձգտումներն ու ակնկալումները, էպոսում ծավալվող դեպքերն ու գործող հերոսների արարքները մեկնաբանում են ժողովրդի ըմբռնողությամբ, երևույթներին նայում են ժողովրդի աչքերով, Նրգեյանը, ընդհակառակը, լինելով սոցիալական այլ խավի ներկայացուցիչ, իր պատումի մեջ, որ հանդիսանում է էպոսի ըստ էության գրական մշակման վատթարագույն օրինակներից մեկը, որոշակիորեն անցկացնում է իր կրոնա-եկեղեցական ոեակցիոն հայացքներն ու շատ որոշակի նացիոնալիստական տրամադրությունները: Այս փաստը նշում է նաև հատորի խմբագրությունը՝ «...պատումի մեջ աչքի են ընկնում ասացողի կրոնական և ազգայնական միտումներն ու երանգավորումները» (Ա. ծ. 3, հ. Բ, մաս Բ, էջ 21):

Եվ իբրեք, այն, ինչ մյուս պատումներում առկա է իբրև աննշան էպիգոգ, հարևանցի հիշատակություն և, բնականաբար, վճռական նշանակություն չունի էպոսի համար, չակոր Նրգեյանի պատումում ներկայանում է իբրև սյուժե, իբրև կոնցեպտիա: Վերցնենք, օրինակ, կրոնի հարցը: էպոսի գրեթե բոլոր պատումներում առաջին ճյուղն սկսվում է Դավիթ Թագավորի և կռապաշտ Թագավորի պաշտած կրոնների հակադրությամբ: Սակայն նրանց կրոնական տարբերությունը «խաչապաշտ» և «կռապաշտ» բառերով էլ սպառվում է: Իսկ Դավթի ճյուղում Դավթի և Մսրամիթի մասին պատմելիս երբեմն առաջինին համարում են «նայու ճրագ», երկրորդին «տաճկի ճրագ»: Այնուհետև, թե առաջին և թե մյուս ճյուղերում պատմության առանցքը դառնում է հայրենիքի պաշտպանությունը, կռիվը ինչպես օտար, այնպես էլ հայրենի կեղծքիչների դեմ: Հակառակ դրանց չակոր Նրգեյանի պատումի առաջին ճյուղում հայի և արարի կրոնների տարբերությունը անցողակի հիշատակությունից վերածվում է սյուժեի և օտար թշնամու դեմ հայ ժողովրդի դարավոր պայքարը ներկայացվում է իբրև հավատի կռիվ:

Այսպես, էպոսի բոլոր պատումներում բազմիցս հիշատակված «յոթ տարվա խառաջը», որ սիմվոլացնում է օտար զավթիչների կողմից հայ ժողովրդի կեղծքված վիճակը և հանդիսանում է նրանց դեմ էպոսի հերոսների մղած դարավոր կռիվների պատճառը, նենգափոխվում է կրոնական հավատով:

Արար զավթիչների և հայերի կռիվը ներկայացնելով հավատի կռիվ, չակոր Նրգե-

յանը բնականաբար պատումում գործող բոլոր հերոսներին դուրս է բերում իրեն մոլե-
ռանդ անթափանչ ապաշտներ և հակառակ կրոնի երգվյալ թշնամիներ:

Էպոսի երեք պատումներում (Ժ, ԺԱ, ԺԲ) և հատկապես Ժ և ԺԲ պատումներում
աղավաղված է նաև մեր էպոսի սոցիալական խոր բովանդակությունը: չար աշխարհի դեմ
բնորոշացած Մհերի հերոսական կերպարը:

Նրգեյանը իր պատումի շորորող ճյուղը ներկայացրել է իրեն թագավորական զահի
համար մղված կռվի պատմություն, իսկ Մհերին իրեն այդ զահին ձգող շատ սովորա-
կան մի ֆեոդալ:

Նրգեյանի պատումում բացակայում է Մհերի քարայրում փակվելու էպիզո-
դը և դրա հետ կապված մանրամասները, իսկ տիրացու Սաքոյի պատումում սխալ է
բացատրված Մհերի քարայրում փակվելու սոցիալական պատճառները: Ըստ այդ պատու-
մի Մհերը քարայրում փակվում է իր որդուն սպանելու պատճառով: Երկու պատումնե-
րում էլ, այսպիսով, դուրս է նետված Մհերի գործունեության առաջնությունը իդեան, չար
աշխարհը կործանելու վերաբերյալ նրա ունեցած խոր հավատը: Տիրացուներ Նրգեյանի
և Սաքոյի պատումների այսօրինակ բովանդակությունը, ինչպես տեսնում ենք, ոչ մի
կապ չունի Մհերի հերոսական արարքներն ու պայծառ օպտիմիզմը պատկերող իսկական
պատումների հետ: Ավելին, նրանք աղավաղում են իսկական պատումներում արտացո-
լված պատմական իրականության ոգին, ֆեոդալների և աշխատավոր դուրսագրության
առաջ հարաբերությունները:

Տիրացուներ Հակոբ Նրգեյանի, Սաքոյի և մի քանի այլ ասացողների պատումնե-
րում իշխանների ու իշխողների դերում են հանդես բերված էպոսի դրական գլխավոր բո-
լոր հերոսները՝ սկսած Սանասարից, վերջացրած Փոքր Մհերով: Տիրացուներ Սաքոյի և
Հակոբի պատումներում տիրում են իսկական թագավորական բարքեր, հերոսների գործո-
ղություններն ու գատնությունները տիպիկ ֆեոդալական են, անընդհատ խոսվում է
իշխանների, նահանգապետների ու նախարարների մասին: Դավիթը իրեն թագավոր շըբ-
ջապատված է բազմաթիվ «նազիր-վեզիրներով» և դրեթե միշտ գտնվում է թալանչիա-
կան պատերազմների մեջ:

Այսուհանդերձ խմբագիրները վերահիշյալ պատումները գետնից են հատորում: Դրանք
դուրս չեն նետվել «Սասնա ծռերից» նախ ինչպես իրենք են նշում, իրր ցույց տալու,
թե սոցիալական այլ միջավայր ընկնելով, ինչպես է կերպարափոխվում էպոսը, որ նեղ
ակադեմիական նկատառում է, և ապա, որ ըստ իս հիմնականն է՝ իյուստրացիա անելու
ներածության մեջ պաշտպանած այն թեզը, թե էպոսը իրեն ֆեոդալական վեպ ժողովրդին
անցնելուց հետո էլ պահել է հայ ֆեոդալի գոյն ու գիտակցությունը: Վեպի գլխավոր
հերոսներն ազնվականներ են, գրում են նրանք «Սասնա ծռերի» ներածության մեջ...
բայց չնայած այդ հանդամանքին, վեպի մեջ այժմ էլ գոյություն ունեն մի շարք միջա-
գեպեր, գերապրուկներ, որոնք ցույց են տալիս, որ ոչ հեռու անցյալում հայ ֆեոդալի գոյն
ու գիտակցությունը լրիվ արտահայտված է եղել նրա մեջ » («Ս. Ժ. », հ. Ա, էջ ԽԲ—20):
Այս թեզը անց է կացված նաև վերջերս հրատարակված հատորի ծանոթագրություններում
«ազնանք», «ազնաց տուն» բառերին տրված բացատրության մեջ, ըստ որի վեպի հերոս-
ների տոհմը եղել է «ազնիվ, ազնվական»: «Ազնանք բառը ծագած է «ազինք» բառի մի եր-
կրորդ հին նշանակությունից, որ է՝ «ազնիվ, ազնվական» («Ս. Ժ. », հ. Բ, մաս Բ, էջ 821):

Այսպես, ուրեմն, «Սասնա ծռերի» երկրորդ հատորի վերջերս հրատարակված երկ-
րորդ մասից պետք է ամբողջությամբ հանվեն Ժ, ԺԱ, ԺԲ պատումները, որովհետև ներ-
կա վիճակով դրանք ա) խորապես ժողովրդական վեպը ներկայացնում են իրեն ազնվա-
կանական-ֆեոդալական վեպ, բ) էպոսի մյուս բոլոր պատումներում պատկերված հայ ժո-
ղովրդի ազատագրական կռիվները վերածում են հավատի կռվի, գ) շահագործողների և
շահագործվողների միջև մղված պայքարը փոխարինում են միջֆեոդալական կռիվներով,
դ) ժողովրդի շահերի անձնուրաց պաշտպաններին, նրա իդեալների մարմնացում հերոս-
ներին դարձնում են թագավորական զահի համար մարտնչողներ, նվաճողներ և ժողովրդի
կողոպտիչներ:

Այս դադափարներն արտահայտող վերահիշյալ պատումները ամբողջությամբ կեղծ
են, հտարամուտ և բացարձակապես ոչ մի կապ չունեն էպոսի խորապես ժողովրդական
մյուս բոլոր պատումների հետ, որոնց մեջ գեղարվեստական խոր ընդհանրացումներով
տրված է օտար և հայրենի կեղեքիչների դեմ հայ ժողովրդի մղած դարավոր հերոսական
և անփոքր:

ԳՐ. ԴՐԻԳՈՐՅԱՆ